

ՄԻԶԱՆԿՅԱԼ ՁԵԿՈՒՅՑ 1  
10 – 26 հունվարի, 2008 թ.

## I. ԱՍՓՈՓՈՒՄ

- Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրությունները տեղի կունենան 2008 թվականի փետրվարի 19-ին: Իշխանությունները հաստատակամություն են հայտնել անցկացնել ԵԱՀԿ անդամ պետությունների ստանձնած պարտավորություններին համապատասխան ժողովրդավարական ընտրություններ:
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) գրանցել է ինը թեկնածուի: Եթե թեկնածուներից որեւէ մեկը չստանա ձայների բացարձակ մեծամասնությունն, ապա առաջին փուլից 14 օր հետո ձայների առավել քանակ ստացած երկու թեկնածուների միջև կանցկացվի ընտրությունների երկրորդ փուլ:
- Ընտրական օրենսդրությունը վերջին անգամ փոփոխվել է 2007 թվականի նոյեմբեր եւ դեկտեմբեր ամիսներին: Այն ներառում է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ կողմից անցյալում արված առաջարկությունները եւ կուռ հիմք է ապահովում ժողովրդավարական ընտրությունների անցկացման համար:
- Ընտրությունները կկազմակերպվեն ԿԸՀ-ի, 41 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների (ԸԸՀ) եւ 1,923 Տեղամասային ընտրական հանձնաժողովների (ՏԸՀ) կողմից: ԿԸՀ-ն ունի ութ անդամ, որոնցից հինգը նշանակվում են քաղաքական կուսակցությունների կողմից: Յուրաքանչյուր ԿԸՀ անդամ առաջադրում է մեկ անդամ ԸԸՀ-ներից յուրաքանչյուրի համար, ովքեր իրենց հերթին առաջադրում են մեկական անդամ յուրաքանչյուր ՏԸՀ-ի համար: ԿԸՀ-ն, ըստ ամենայնի, լավ է նախապատրաստված գալիք ընտրությունների անցկացման համար:
- ԸԸՀ նախագահի, տեղակալի եւ քարտուղարի (*եռյակ* անդամներ) պաշտոններում ընտրված 123 անդամների ճնշող մեծամասնությունն առաջադրված էին ԿԸՀ այն անդամների կողմից, որոնք նշանակված են Նախագահի, իշխող Հանրապետական կուսակցության եւ վերջինիս կոալիցիոն գործընկեր Բարգավաճ Հայաստանի կողմից:
- Պաշտոնապես նախընտրական քարոզարշավը մեկնարկել է հունվարի 21-ին: Թեկնածուների մեծամասնությունը պլանավորում է լայնածավալ քարոզչություն իրականացնել Հայաստանի ամբողջ տարածքում: Որոշ թեկնածուներ արդեն տարբեր շրջաններում՝ բացօթյա եւ փակ տարածքներում իրականացրել են մի շարք միջոցառումներ:

*Սույն միջանկյալ զեկույցի անգլերեն տարբերակը  
հանդիսանում է միակ պաշտոնական փաստաթուղթը:*

- Հունվարի 11-ից ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ն իրականացնում է յոթ հեռուստաընկերությունների, երկու ռադիոկայանների եւ չորս թերթերի մոնիտորինգ: Քարոզարշավի պաշտոնական մեկնարկին նախորդող մոնիտորինգի ժամանակահատվածում (հունվարի 11-20-ը) էլեկտրոնային լրատվամիջոցների մեծամասնությունը, այդ թվում նաեւ Հանրային հեռուստատեսությունը, առաջադրված թեկնածուների լուսաբանման հարցում ցուցաբերել են հստակ անհավասարություն:

## II. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրությունները տեղի կունենան 2008 թվականի փետրվարի 19-ին: 2007 թվականի դեկտեմբերի սկզբին ԵԱՀԿ-ԺՀՄԻԳ-ը իրականացրել է Կարիքների գնահատման առաքելություն (ԿԳԱ)<sup>1</sup>: Այն առաջարկել է գործուղել Ընտրությունների դիտորդական առաքելություն (ԸԴԱ): 2007 թվականի դեկտեմբերի 19-ին Արտաքին գործերի նախարարը (ԱԳՆ) ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ուղարկել է ընտրությունների դիտորդական առաքելություն իրականացնելու հրավեր: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն պաշտոնապես իր աշխատանքը սկսել է հունվարի 10-ին: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն, որի ղեկավարն է Դեսպան Գեոտ Արենսը, կազմված է Երեւանում տեղակայված 11 անդամներից բաղկացած հիմնական թիմից եւ 28 հանրապետության տարածքով մեկ տեղաբաշխված երկարաժամկետ դիտորդներից, որոնք ժամանել են ԵԱՀԿ մասնակից 23 պետություններից: 2008 թվականի ընտրություններն արդեն թվով յոթերորդն են, որ Հայաստանի Հանրապետությունում կղիտարկվեն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից՝ ըստ կազմակերպության ստանդարտ մեթոդաբանության:<sup>2</sup>

## III. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ

2008 թվականի փետրվարի 19-ի նախագահական ընտրությունները հինգերորդն են Հայաստանի անկախացումից ի վեր: Գործող նախագահ Ռոբերտ Քոչարյանը, առաջին անգամ ընտրվելով 1998-ին, պաշտոնավարել է երկու հաջորդական ժամկետներում եւ, համաձայն Սահմանադրության, այլեւս չի կարող մասնակցել ընտրություններին որպես թեկնածու: Նախագահն ընտրվում է տրված ձայների բացարձակ մեծամասնությամբ: Եթե թեկնածուներից որեւէ մեկը չի ստանում բավարար թվով ձայներ, ապա առաջին փուլից 14 օր հետո ձայների առավել քանակ ստացած երկու թեկնածուների միջեւ անց է կացվում ընտրությունների երկրորդ փուլ: Ընտրությունների երկրորդ փուլում ձայների առավելագույն քանակը ստացած թեկնածուն համարվում է ընտրված:

<sup>1</sup> Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԿԳԱ Հաշվետվությունը՝ [http://www.osce.org/documents/odihr/2007/12/28831\\_en.pdf](http://www.osce.org/documents/odihr/2007/12/28831_en.pdf)

<sup>2</sup> Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ հաշվետվությունները 1996, 1998 եւ 2003 թ.թ. նախագահական եւ 1999, 2003 եւ 2007 թ.թ. խորհրդարանային ընտրությունների վերաբերյալ. [www.osce.org/odihr-elections/14350.html](http://www.osce.org/odihr-elections/14350.html)

2007 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո Հանրապետական կուսակցությունն ունի խմբակցության 65 անդամ 131 պատգամավոր ունեցող Ազգային Ժողովում: Այն կռալիցիա է կազմել Բարգավաճ Հայաստան կուսակցության հետ (խմբակցության 25 անդամ) եւ համագործակցում է Հայ Հեղափոխական Դաշնակցության (ՀՅԴ) հետ (խմբակցության 16 անդամ): Ընդդիմադիր Օրինաց Երկիր եւ Ժառանգություն կուսակցություններն ունեն, համապատասխանաբար, խմբակցության ութ եւ յոթ անդամներ: Տաս պատգամավորներ որեւէ խմբակցության անդամ չեն հանդիսանում:

Վարչապետ Սերժ Սարգսյանը Հանրապետական կուսակցության թեկնածուն է: Նրա թեկնածությանը նախագահական ընտրություններում ակտիվ աջակցություն է ցուցաբերում Բարգավաճ Հայաստան կուսակցությունն եւ սատարում են 15 արտախորհրդարանական քաղաքական կուսակցություններ: Կռալիցիոն կառավարության հետ համագործակցության համաձայնագիր կնքած լինելով՝ ՀՅԴ-ն նախագահական ընտրություններում առաջադրել է իր թեկնածուին՝ Ազգային Ժողովի փոխնախագահ Վահան Հովհաննիսյանին: *Օրինաց Երկիր* կուսակցությունն առաջադրել է Արթուր Բաղդասարյանի (կուսակցության նախագահ եւ խմբակցության ղեկավար) թեկնածությունը: Չորս թեկնածուներ առաջադրվել են արտախորհրդարանային կուսակցությունների կողմից՝ Վազգեն Մանուկյան (Ազգային ժողովրդավարական միություն), Արտաշես Գեղամյան (Ազգային Միաբանություն կուսակցություն), Տիգրան Կարապետյան (Ժողովրդական կուսակցություն), Արամ Հարությունյան (Ազգային համաձայնություն կուսակցություն): Երկու թեկնածուներ՝ Արման Մելիքյան եւ Լեւոն Տեր-Պետրոսյան (Հանրապետության առաջին նախագահ 1991-1998 թթ)<sup>3</sup> ինքնաառաջադրված են: Ժառանգություն կուսակցությունը չի առաջադրել իր թեկնածուին եւ մինչ օրս չի հայտարարել այլ թեկնածուներից մեկին սատարելու մասին:

Հայաստանի բարձրաստիճան պաշտոնյաները հաստատակամություն են հայտնել ԵԱՀԿ մասնակից պետությունների ստանձնած պարտավորություններին համապատասխան ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու մասին եւ տեղեկացրել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ այս մտադրությունը փոխանցվել է նաեւ պետական կառավարման ստորին օղակներին:

#### IV. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Հայաստանի Սահմանադրությունը երաշխավորում է ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար անհրաժեշտ քաղաքացիական եւ քաղաքական իրավունքները: Ընտրական օրենսգիրքը ընտրությունները

<sup>3</sup> Պրն. Լեւոն Տեր-Պետրոսյանին սատարում են 15 արտախորհրդարանական քաղաքական կուսակցություններ:

կանոնակարգող ամենակարեւոր առաջնային իրավական փաստաթուղթն է<sup>4</sup>: 2007 թ-ի մայիսի 12-ի խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ վերջնական զեկույցում նշվում է, որ «Ընտրական օրենսգիրքը, որը 2003 թ. խորհրդարանական ընտրություններից ի վեր զգալիորեն փոփոխվել և կատարելագործվել է, կուռ հիմքեր ապահովեց ժողովրդավարական ընտրությունների անցկացման համար, չնայած որ դեռ մնում են թերություններ:»

2007 թվականի ընտրություններից հետո Ընտրական օրենսգիրքը երկու անգամ փոփոխության է ենթարկվել՝ 2007 թվականի նոյեմբերի 16-ին եւ դեկտեմբերի 18-ին: Վերջին փոփոխություններն օրենքի ուժ ստացան թեկնածուների առաջադրման վերջնաժամկետից հետո: Դեկտեմբերյան փոփոխությունները նախատեսեցին, որ Առաջին աստիճանի դատարանների փոխարեն Վարչական դատարաններն են իրավասու ընտրությունների գործընթացներին վերաբերող բողոքների ու բողոքարկումների քննության համար, ինչպես նաեւ ամրապնդեցին նախընտրական քարոզարշավի ծախսերի իրականացման կանոնների կատարումն:

Չնայած ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի եւ Եվրախորհրդի Վենետիկյան հանձնաժողովի հետ նոյեմբեր/դեկտեմբեր ամիսներին արված օրենսդրության փոփոխություններն ուղղակիորեն չեն քննարկվել, փոփոխությունների մի մասն արտացոլում են 2007 թ-ի մայիսի 12-ի խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ վերջնական զեկույցում արված առաջարկությունները:

## V. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Թեկնածուների առաջադրման վերջնաժամկետը 2007 թվականի դեկտեմբերի 6-ն էր: Ինը թեկնածու առաջադրված քաղաքացիներ ներկայացրել են գրանցման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը: Հանրապետության Նախագահ կարող է ընտրվել 35 տարին լրացած, վերջին տասը տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին տասը տարում Հանրապետությունում մշտապես բնակվող յուրաքանչյուր անձ: Համաձայն 2007 թվականի փետրվարին ընդունված օրենսդրական փոփոխության՝ երկքաղաքացիները չեն կարող առաջադրվել որպես ՀՀ Նախագահի ընտրությունների թեկնածու:

Թեկնածուներ կարող են առաջադրվել կուսակցությունների կողմից, կամ՝ Ընտրական օրենսգրքի 2007 թվականի նոյեմբերի փոփոխությունների ընդունումից հետո, նաեւ «ինքնաառաջադրվել» (այսինքն, որպես անկուսակցական կամ անկախ թեկնածու): Փոփոխված օրենսդրությամբ նախագահի թեկնածուներից չի

<sup>4</sup> Ընտրությունների անցկացմանն առնչվող այլ իրավական ակտերի թվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքը, Քրեական օրենսգիրքը, Վարչական դատավարության օրենսգիրքը, Ժողովներ, հանրահավաքներ, երթեր ու ցույցեր անցկացնելու մասին օրենքը, Քաղաքական կուսակցությունների մասին օրենքը եւ Հեռահաղորդակցության մասին օրենքը: ԿԸՀ-ն նաեւ ընդունում է որոշումներ ընտրական գործընթացների իրականացման վերաբերյալ:

պահանջվում հավաքել քաղաքացիների ստորագրություններ ի աջակցություն իրենց առաջադրման: Այնուամենայնիվ, թեկնածուների կողմից վճարվող ընտրական գրավի չափն ավելացել է՝ 5 միլիոն դրամից (մոտ 12,000 եվրո) դառնալով 8 միլիոն դրամ (մոտ 17,000 եվրո)

Ի թիվս այլոց, քաղաքացիական ծառայողները, բարձրաստիճան պետական պաշտոնյաները եւ «քաղաքական եւ հայեցողական» պաշտոններ զբաղեցնող անձինք կարող են գրանցվել որպես թեկնածու: 2008 թվականի հունվարի 7-ին ԿԸՀ-ն պաշտոնական պարզաբանում տվեց այն դասերի անձանց վերաբերյալ, ովքեր պարտավոր են արձակուրդ գնալ նախագահի թեկնածու գրանցվելուց հետո (Ընտրական օրենսգիրք, հոդված 22.1 եւ հոդված 78)<sup>5</sup>, համաձայն որի անձինք, ովքեր օրենքով դասվում են «քաղաքացիական ծառայողների» շարքում, պարտավոր են դադարեցնել իրենց պաշտոնական լիազորությունները, մինչդեռ «քաղաքական եւ հայեցողական» պաշտոններ զբաղացնող անձինք նման պարտավորություն չունեն <sup>6</sup>: Այնուամենայնիվ, թեկնածուներից ոչ մեկը չպետք է օգտագործի իր պաշտոնական դիրքի առավելությունը, եւ պետական գույքի օգտագործման իրավունքը քարոզարշավի ընթացքում հավասար է բոլոր թեկնածուների համար: Բարձրաստիճան պետական պաշտոնյաները պահպանում են պաշտպանություն ու անվտանգություն ստանալու իրենց իրավունքը, որ նրանց շնորհվում է ստանձնած պաշտոնի համաձայն: Վարչապետ Սերժ Սարգսյանը շարունակում է իր պաշտոնական լիազորությունների կատարումը, ինչպես նաեւ մասնակցում է ընտրարշավին:

Հունվարի 18-ին ԿԸՀ-ն բոլոր ինը թեկնածու առաջադրված քաղաքացիներին գրանցեց որպես թեկնածու: Թեկնածուները կարող են ինքնաբացարկ հայտարարել մինչեւ փետրվարի 9-ը, որից հետո կտպագրվեն քվեաթերթերը: Քվեաթերթի վրա թեկնածուների անունները կգրվեն այբբենական կարգով:

## VI. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ընտրությունները կազմակերպվում են եռաստիճան համակարգի կողմից՝ Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի (ԿԸՀ) գլխավորությամբ եւ 41 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների (ԸԸՀ) ու 1,923 Տեղամասային ընտրական հանձնաժողովների (ՏԸՀ) կողմից: ԿԸՀ-ն եւ ԸԸՀ-ները հիմնական պետական մարմիններ են, մինչդեռ ՏԸՀ-ները ժամանակավոր մարմիններ են, որոնք պետք է կազմվեն մինչեւ հունվարի 27-ը: Յուրաքանչյուր հանձնաժողով ունի

<sup>5</sup> Հոդված 78. Հանրապետության Նախագահը կամ Սահմանադրության համաձայն՝ Հանրապետության Նախագահի պաշտոնակատարը՝ Ազգային Ժողովի նախագահը կամ վարչապետը, Հանրապետության Նախագահի թեկնածու առաջադրվելու դեպքում շարունակում են իրենց լիազորությունների կատարումը:

<sup>6</sup> ԿԸՀ 2008 թվականի հունվարի 7-ի որոշում #N1:

Նախագահ, Տեղակալ եւ Քարտուղար («եռյակ»), ովքեր ընտրվում են հանձնաժողովի առաջին նիստի ժամանակ:

ԿԸՀ-ն ունի ութ անդամ: Մեկ անդամ առաջադրվում է Հանրապետության Նախագահի կողմից եւ երկու անդամ առաջադրվում են ՀՀ դատարանների նախագահների խորհրդի կողմից<sup>7</sup>: Ազգային Ժողովում ներկայացված հինգ կուսակցություններից յուրաքանչյուրը (Հանրապետական, Բարգավաճ Հայաստան, Հայ Հեղափոխական Դաշնակցություն, Օրինաց Երկիր եւ Ժառանգություն կուսակցություններ) առաջադրում է մեկ անդամ: Ընտրական հանձնաժողովների նշանակումներն իրականացվում են հիերարխիկ կարգով՝ յուրաքանչյուր ԿԸՀ անդամ առաջադրում է մեկ անդամ յուրաքանչյուր ԸՀ-ի համար, ով, իր հերթին, առաջադրում է մեկ անդամ այդ ԸՀ-ի տարածքում եղած յուրաքանչյուր ՏՀ-ի համար:

ԸՀ-ների *եռյակ* պաշտոններում ընտրված 123 անձանցից 93-ը (մոտ 75 տոկոս) առաջադրվել են Հանրապետության Նախագահի, Հանրապետական կուսակցության կամ Բարգավաճ Հայաստանի կողմից, 23-ն առաջադրվել են ՀՅԴ կողմից նշանակված ԿԸՀ անդամի կողմից: Միայն դրանցից յոթն են առաջադրվել ընդդիմադիր *Օրինաց Երկիր* եւ Ժառանգություն կուսակցությունների նշանակված ԿԸՀ անդամների կողմից:

Օրենքի համաձայն բոլոր ընտրական հանձնաժողովների բոլոր անդամները պետք է անցած լինել դասընթացներ եւ ունենան որակավորման վկայական: Համաձայն ԿԸՀ նախագահի երեք դասընթացների փուլ է կազմակերպվել 2007 թվականին եւ մոտ 50,000 անձինք ստացել են վկայականներ:

Ժառանգություն կուսակցությունը, որ 2007 թվականին առաջին անգամ ստացավ խորհրդարանական տեղեր, կազմել է մոտ 450 ՏՀ հավանական անդամների ցուցակ, որը մոտ 1,470 անձով պակաս է կազմավորվելիք ՏՀ-ների թվից: Հունվարի 18-ին կուսակցությունը առաջարկել է «ընդդիմադիր» թեկնածուներին իրենց տրամադրել անձանց անուններ (ովքեր ունեն ընտրական գործընթացի կազմակերպման վկայական), որոնց կուսակցությունը կարող է առաջադրել որպես ՏՀ անդամ:

Ընտրական օրենսգիրքը յուրաքանչյուր թեկնածուի իրավասություն է տալիս նշանակել վստահված անձինք եւ նրանց շնորհում է տարբեր իրավունքներ, այդ թվում ընտրական հանձնաժողովների նիստերին մասնակցելու, ընտրական փաստաթղթերին ծանոթանալու եւ պատճեններ ստանալու, ընտրական

<sup>7</sup> Համաձայն Ընտրական օրենսգրքի (հոդված 35)՝ որեւէ կուսակցական խմբակցությանը չհարող պատգամավորական խումբը իրավասու է ԿԸՀ մի անդամ առաջադրել: Քանի որ այս խումբը չի կազմվել 2007 թվականի մայիսի 12-ի խորհրդարանական ընտրություններից հետո, համաձայն Ընտրական օրենսգրքի հոդված 35.3-ի Դատարանների նախագահների խորհուրդը առաջադրում է ԿԸՀ 2-րդ անդամին:

հանձնաժողովների որոշումները, գործողությունները կամ անգործությունը բողոքարկելու, քվեաթերթիկների տպագրման, փոխադրման, պահպանման եւ հաշվարկման գործընթացին հետեւելու, հանձնաժողովի նախագահին հանձնաժողովի աշխատանքի վերաբերյալ դիտողություններ ու առաջարկություններ ներկայացնելու եւ քվեարկության օրվա իրադարձություններին հետեւելու իրավունքները:

Զեկույցում ընդգրկված ժամանակահատվածում ԿԸՀ-ն ունեցել է երկու պաշտոնական նիստ, որոնց մասնակցել են լրագրողներ, ընտրությունների դիտորդներ եւ թեկնածուների լիազորված ներկայացուցիչներ: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ն հրավիրվել է մասնակցելու ԿԸՀ-ի հունվարի 16-ի «աշխատանքային հանդիպմանը»: Ըստ ամենայնի, ԿԸՀ-ն լավ է նախապատրաստվել գալիք ընտրությունների անցկացման համար: Այն ընդունել է Ընտրական օրենսգրքի դրույթներին լրացնող բազմաթիվ որոշումներ: Հունվարի 30-ից փետրվարի 12-ն ընկած ժամանակահատվածում ԿԸՀ-ն պլանավորում է անցկացնել 164 ՏԸՀ դասընթաց: ՏԸՀ *եռյակների* անդամները հավելյալ ուսուցում կանցնեն քվեների հաշվարկի եւ արձանագրությունների լրացման վերաբերյալ:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդները հանդիպել են բոլոր 41 ԸԸՀ-ների հետ, որոնք, ընդհանուր առմամբ, լավ պատրաստված եւ սարքավորումներով հագեցած տպավորություն են թողել: Հունվարի 27-ին ԸԸՀ-ները կանցկացնեն պաշտոնական նիստեր՝ ՏԸՀ-ների անդամներին նշանակելու համար: Թեկնածուներից շատերը դեռ պետք է նշանակեն իրենց վստահված անձանց այդ մարմիններում:

### Ընտրողների գրանցում

Որոշ բացառություններով, 18 տարին լրացած բոլոր քաղաքացիները կարող են քվեարկել: Քաղաքացիները կարող են քվեարկել միայն մեկ ընտրատեղամասում: Ընտրական օրենսգրքի 2007 թվականի փետրվար ամսվա փոփոխությամբ քվեարկությունը սահմանափակվեց միայն Հայաստանի տարածքով, հետեւապես, բոլոր ընտրության իրավունք ունեցող քաղաքացիները պետք է բնակվեն Հայաստանում:

2005 թվականից զգալի ջանքեր են գործադրվել ընտրողների գրանցումը բարելավելու ուղղությամբ: Ընտրողների կենտրոնացված եւ թվայնացված ռեգիստրի վարման համար պատասխանատու է ուստիկանությունը: ԿԸՀ-ն տեղեկացրել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ին, որ ընտրողների ռեգիստրում ներառված տվյալները հիմնվում են բնակչության պետական ռեգիստրի, որը նույնպես վարում է ուստիկանությունը, վրա, ըստ բնակչության վայրի հաշվառման փոխարեն, ինչպես սահմանված է Ընտրական օրենսգրքում: Ուստիկանության անձնագրերի եւ վիզաների վարչությունը (ռուսերեն «ՕՎԻՌ» հապավմամբ) մինչ օրենքով սահմանված վերջնաժամկետը (հունվարի 10-ը) ԿԸՀ-ին է տրամադրել ընտրողների թարմացված ռեգիստրը՝ ըստ ԸԸՀ-ների եւ

*Սույն միջանկյալ զեկույցի անգլերեն տարբերակը հանդիսանում է միակ պաշտոնական փաստաթուղթը:*

ընտրատեղամասերի (այսուհետ՝ ընտրողների ցուցակներ): Այդ օրվա տվյալների համաձայն ընտրողների ռեգիստրը ունեցել է թվով 2,311,665 մուտքագրում, որը մոտ 6,000-ով պակաս է 2007 թվականի ընտրությունների թվից:

Քաղաքացիները ընտրողների ռեգիստրի տվյալներին կարող են ծանոթանալ ԿՀՀ կայքում կամ համապատասխան ընտրատեղամասում, որտեղ ընտրողների ցուցակները հանրամատչելի են: Քաղաքացիները կարող են քվեարկելու համար գրանցվելու, ռեգիստրից հանվելու կամ ռեգիստրի տվյալների ճշգրտման հարցերով դիմել տեղական համայնքների ղեկավարներին կամ «ՕՎԻՌ»: Ցանկացած ոք կարող է ԿՀՀ կայքում գտնել ընտրողների ցուցակի էլեկտրոնային տարբերակը:

Ընտրական օրենսգրքի 2007 թվականի նոյեմբերի փոփոխությունները քաղաքացիներին հնարավորություն են տալիս քվեարկել ըստ բնակության վայրի, իրենց հաշվառման վայրի փոխարեն, եթե քաղաքացիները մինչ ընտրության օրը դիմում են փաստացի բնակության վայրի համայնքում քվեարկության համար գրանցվելու եւ ժամանակավորապես իրենց հաշվառման վայրի ընտրողների ցուցակից հեռացվելու համար:

### Ընտրողների տեղեկացվածություն

«ՕՎԻՌ»-ը քաղաքացիների համար բացել է թեժ գիծ, որի միջոցով քաղաքացիները կարող են զեկույցել ընտրողների ցուցակում եղած անձտությունների մասին եւ ստանալ հարցերի պատասխաններ: Այն նաեւ պատրաստել է սոցիալական գովազդներ, որոնք տեղեկացնում են քաղաքացիներին, թե ինչպես պետք է իրենց անունն ավելացնեն ընտրողների ցուցակում կամ ուղղեն անձտությունները: Գովազդները շաբաթական մեկ անգամ հեռարձակվում են Հանրային հեռուստատեսությամբ եւ ռադիոյով: ԿՀՀ-ն հզորացրել է իր կայքի ([www.elections.am](http://www.elections.am)) կարողություններն ու գործառնությունները եւ, միջազգային կազմակերպությունների աջակցությամբ, թողարկել է երկու սոցիալական գովազդ, որոնք լուսաբանում են քվեարկության գործընթացը եւ եթեր են արձակվում ութ հեռուստաընկերությունների եւ տեղական լրատվամիջոցների կողմից:

Անցյալում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը նկատել է, որ լայն տարածում ունեին ընտրական գործընթացի արդարության վերաբերյալ շրջանառվող ասեկոսներն ու շահարկումները, օրինակ անձնագրերի հավաքման եւ ձայների գնման մասին, որոնք բացասաբար են ազդել ընտրությունների նկատմամբ հանրության վստաստության վրա<sup>8</sup>: Նման ասեկոսներ շրջանառվում են նաեւ 2008 թվականի ընտրություններից առաջ, եւ թեկնածուներից մեկը՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը, տարաբնույթ

<sup>8</sup> Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ 2007 թվականի խորհրդարանական ընտրությունների ԸՂԱ Միջանկյալ զեկույց 3-ն ու Վերջնական զեկույցը, ինչպես նաեւ 2008 թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԿԳԱ Հաշվետվությունը:



հայտարարություններ է արել այն մասին, որ քայլեր են ձեռնարկվում ընտրությունները կեղծելու ուղղությամբ:

2007 թվականի խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ն Վերջնական զեկույցում առաջարկել է ընտրությունների նկատմամբ վստահության բարձրացման նպատակով առավել շատ ուշադրություն դարձնել ընտրողների կրթությանը: Մինչ լրատվամիջոցները հեռարձակում են պաշտոնապես հաստատված սոցիալական գովազդները, 2008 թվականի ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ն մինչ այժմ տեղեկություն չունի որեւէ հստակ հանրային տեղեկատվության մասին, որ վստահեցնում է քաղաքացիներին իրենց ձայնի գաղտնիության, զգուշացնում է ձայների առքի կամ վաճառքի համար օրենքով սահմանված պատասխանատվության կամ բազմակի քվեարկությունը կանխարգելող իրավական երաշխիքների մասին:

## VII. ՔԱՐՈՉԱՐՇԱՎԸ

Քարոզարշավի 28-օրյա «պաշտոնական» ժամկետը սկսել է հունվարի 21-ին եւ կավարտվի քվեարկության օրվանից մեկ օր առաջ: Չնայած որոշ թեկնածուների հայտարարություններին մյուսների կողմից վարած «վաղ» քարոզչական գործողությունների վերաբերյալ, քարոզարշավի «պաշտոնական» ժամկետից առաջ արվող նախընտրական քարոզարշավն արգելող իրավական հիմքեր չկան: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ի հունվարի 10-ի տեղակայումից մինչ հունվարի 20-ը նախընտրական քարոզարշավն, ընդհանուր առմամբ, պասսիվ էր ընթանում:

Հունվարի 15-ին Լեւոն Տեր-Պետրոսյանի քարոզարշավի թիմը պաշտոնապես դիմեց հունվարի 22-ին Երեւանի կենտրոնում հանրահավաք ու երթ կազմակերպելու մտադրությամբ: Հունվարի 16-ին Երեւան քաղաքի քաղաքապետը հայտարարություն արեց, որում կոչ էր արվում քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին ու քաղաքացիներին զերծ մնալ երթեր կազմակերպելուց՝ երթեւեկության հնարավոր խցանումների եւ եղանակային պայմանների պատճառով<sup>9</sup>: Լեւոն Տեր-Պետրոսյանի թիմին Երեւանի քաղաքապետարանի կողմից տրված գրավոր պատասխանում հղում արվեց քաղաքապետի հայտարարությանը, բայց երթը չարգելվեց: Չնայած քաղաքապետի արված հայտարարության ու դիմումին տրված քաղաքապետարանի պատասխանի արդյունքում առաջացած հակասությանը, հանրահավաքն ու երթն ընթացան առանց միջադեպերի:

Օրենսդրությամբ թեկնածուներն իրավունք ունեն քարոզարշավում իրականացնել մի շարք գործողություններ՝ 70,000,000 դրամը (մոտ 155,000 եվրո) չգերազանցելու պայմանով: Համայնքների ղեկավարները պարտավոր են քարոզարշավի մեկնարկից ոչ ուշ, քան 5 օր անց (հունվարի 25-ին) վայրեր հատկացնել քարոզչական նյութերի փակցման համար: Օրենքով սահմանվում է, որ այդ վայրերում փակցված նյութերը

<sup>9</sup> Հայտարարությունը տեղակայված էր Երեւանի քաղաքապետարանի կայքում 2008 թ. հունվարի 16-ին՝ [www.yerevan.am](http://www.yerevan.am)

չպետք է հեռացվեն: Այնուամենայնիվ, օրենքով հատկացված վայրերից բացի այլ վայրերում քարոզարշավի նյութերի փակցնելը օրենքով արգելված չէ, բայց վերջիններս չունեն օրենքով սահմանված պաշտպանություն:

Օրենսդրությամբ սահմանված է նաև, որ պետական մարմինները պետք է անվճար եւ հավասարության հիմունքներով տրամադրեն շինություններ քարոզարշավի միջոցառումներն իրականացնելու համար<sup>10</sup>: Ավելի վաղ, ԿԸՀ-ն որոշում էր ընդունել, որ այս շինություններում միջոցառումներ իրականացնելու համար թեկնածուները պետք է առաջին հերթին դիմեն համապատասխան ԸԸՀ-ին, որն էլ այդ խնդրանքները կուղարկի լիազոր պետական մարմին<sup>11</sup>:

Քարոզարշավի պաշտոնական մեկնարկին թեկնածուներից շատերը մամլո ասուլիսներ հրավիրեցին՝ իրենց նախընտրական պլատֆորմը հայտարարելու համար: Թեկնածուների մեծ մասը մտադրություն ունեն իրականացնելու լայնածավալ քարոզարշավ Հանրապետության տարածքով մեկ: Թեկնածուներից ոմանք տարբեր մարզերում բացօթյա եւ փակ տարածքներում կազմակերպել են միջոցառումներ, բացել են կամ դեռ պլանավորում են բացել գրասենյակներ Հայաստանի տարբեր բնակավայրերում: Լեւոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբից ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդներին տեղեկացրել են, որ իրենք դժվարությունների առաջ են կանգնել որոշ բնակավայրերում նախընտրական քարոզարշավի համար գրասենյակի վարձակալության համար տարածք տրամադրելու ցանկություն ունեցող անձանց գտնելու մեջ: Օրինաց Երկիր կուսակցությունը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդներին տեղեկացրել է, որ ստիպված է եղել փակել Լոռի մարզում տեղակայված գրասենյակը՝ տարածքի սեփականատիրոջ հասցեին արված սպառնալիքների պատճառով: Հունվարի 25-ին կուսակցության Վանաձորի գրասենյակը ենթարկվել է վանդալիզմի:

Տարածքային կառավարման նախարար եւ փոխվարչապետ Հովիկ Աբրահամյանը տեղեկացրել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ին, որ արձակուրդ է գնում իր զբաղեցրած պաշտոնում՝ ստանձնելով Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբի պետի պարտականությունները, իսկ Հանրապետական կուսակցության անդամ բոլոր մարզպետներին խնդրել են կամ ուղղակիորեն չմասնակցել Սերժ Սարգսյանի օգտին քարոզչությանը, կամ դա անել աշխատանքային ժամերից դուրս: ՀՅԴ անդամ երեք նախարարներ նույնպես արձակուրդ են վերցրել:

## VIII. ԼՐԱՏՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Սահմանադրությունը ապահովում է խոսքի ազատություն եւ տեղեկատվության ազատություն: Քրեական օրենսգիրքը, այնուամենայնիվ, զրպարտության եւ

<sup>10</sup> ԿԸՀ-ն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ին տեղեկացրել է, որ համաձայն օրենքի այս դրույթների միայն ազգային պետական մարմինների սեփականություն հանդիսացող շինություններն են, որ պետք է տրամադրվեն անվճար:

<sup>11</sup> ԿԸՀ որոշում #38-Ն, 2005 թ. օգոստոսի 3

վիրավորանքի համար նախատեսում է ազատագրելու: Հեռուստատեսության եւ ռադիոհեռարձակման մասին օրենքը, որ փոփոխվել է 2007 թվականի նոյեմբերին, արգելում է գրաքննությունը: Այդուհանդերձ, 2007 թվականի դեկտեմբերին Լրատվամիջոցների ազատության գծով ԵԱՀԿ ներկայացուցիչը նամակ է ուղարկել Արտաքին գործերի նախարարություն, կարծիք արտահայտելով, որ «անկախ եւ ընդդիմադիր լրատվամիջոցների նկատմամբ գործարկված ոտնձգությունների ու բռնությունների վերջին դեպքերը նպաստել են Հայաստանի լրագրողական աշխարհում սպառնալիքների եւ վախի մթնոլորտի ձեւավորմանը»<sup>12</sup>:

Ընտրական օրենսգրքի համաձայն՝ հանրային եւ մասնավոր լրատվամիջոցները պարտավոր են «անկողմնակալ եւ չքննադատող» տեղեկատվություն ներկայացնել թեկնածուների քարոզարշավների մասին, ինչպես նաեւ «հավասար պայմաններ երաշխավորել զանգվածային լրատվամիջոցների մատչելիության առումով»: Չնայած Ընտրական օրենսգրքով սահմանվում է, որ ԿԸՀ-ն է վերահսկում զանգվածային լրատվամիջոցների կողմից քարոզարշավի իրականացման հավասար պայմանների ապահովումը, Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովն է փաստացի իրականացնում համապատասխանության մոնիտորինգը:

Թեկնածուներին տրամադրվում է անվճար եթերաժամ, եւ նրանք կարող են նաեւ գնել եթերաժամ: Յուրաքանչյուր թեկնածու իրավունք ունի անվճար հիմունքներով ստանալ մինչեւ 60 րոպե եթերաժամ հանրային հեռուստատեսությամբ եւ մինչեւ 120 րոպե հանրային ռադիոյով: Ի հավելումն, յուրաքանչյուր թեկնածու կարող է վճարովի հիմունքներով ձեռք բերել մինչեւ 120 րոպե եթերաժամ Հանրային հեռուստատեսությամբ եւ մինչեւ 180 րոպե հանրային ռադիոյով: Օրենքով սահմանված կարգով, հունվարի 21-ին ԿԸՀ-ն վիճակահանությամբ հաստատեց թեկնածուների անվճար եւ վճարովի լուսաբանման հերթականությունը: Համաձայն ԿԸՀ որոշման՝ հանրային հեռուստատեսությամբ քարոզարշավը եթեր կարձակվի ամեն օր հունվարի 23-ից սկսած, ժամը 17:15-ից, ինչը նշանակում է, որ մեծ մասով հեռարձակումը տեղի է ունենալու ամենամեծ հեռուստալսարանն ապահովող հեռուստաժամից (primetime-ից) դուրս: Հեռարձակման այս ժամանակահատվածը սահմանվել է Հանրային հեռուստատեսության եւ ռադիոյի խորհրդի առաջարկով:

Հեռուստատեսությունը քաղաքացիների համար տեղեկատվության ամենակարեւոր աղբյուրն է հանդիսանում: Չնայած լրատվամիջոցների համեմատաբար մեծ թվին Հայաստանում, խոսքի ազատության հարցերով զբաղվող մի շարք միջազգային կազմակերպություններ, այդ թվում նաեւ Լրատվամիջոցների ազատության գծով ԵԱՀԿ ներկայացուցիչը, անցյալում նշել են հեռարձակող լրատվամիջոցներով ներկայացվող կարծիքների բազմազանության պակասը<sup>13</sup>: Հունվարի 11-ին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ն սկսեց լրատվամիջոցների մոնիտորինգը: Յոթ հեռուստաընկերությունների, երկու ռադիոկայանների եւ չորս թերթերի

<sup>12</sup> Տե՛ս՝ [www.osce.org/fom/item\\_1\\_29104.html](http://www.osce.org/fom/item_1_29104.html)

<sup>13</sup> Տե՛ս՝ [www.osce.org/documents/rfm/2006/07/20007\\_en.pdf](http://www.osce.org/documents/rfm/2006/07/20007_en.pdf)

տեղեկատվությունը վերլուծության է ենթարկվում, բացի ամենից նաև, նախընտրական քարոզարշավի ընթացքում լուսաբանվող քաղաքական տեսանկյունների բազմազանությունը գնահատելու նպատակով<sup>14</sup>:

Մոնիտորինգի՝ քարոզարշավի «պաշտոնական» մեկնարկից առաջ ընկած ժամանակահատվածում (հունվարի 11-20), թիրախ յոթ հեռուստատեսություններից երեքը իրենց լուրերի թողարկումներում բոլոր ինը թեկնածուներին հատկացված ժամանակի մեծամասնությունը հատկացրել են Սերժ Սարգսյանին<sup>15</sup>: Հիմնականում լուսաբանվում էր նրա՝ վարչապետի պաշտոնում իրականացրած գործունեությունը: Պրն. Սարգսյանին՝ մասնավոր չէ, Կենտրոն, Շանթ եւ Արմենիա հեռուստաընկերությունների կողմից տրամադրված ժամանակը, նույնիսկ հաշվի առնելով նրա պաշտոնական պարտավորությունների կատարումը, գերազանցել է այն ծավալը, որ ողջամտորեն կարող է համարվել ընդունելի:

Մնացած ութ թեկնածուները որոշ չափով լուսաբանվել են մոնիտորինգի ենթարկվող հեռուստատեսությունների մեծ մասի կողմից: Այդուհանդերձ, ի հակադրություն գրեթե բացառապես դրական կամ չեզոք լուսաբանման, որին արժանացել է Սերժ Սարգսյանը, Լեւոն Տեր-Պետրոսյանը պարբերաբար պատկերվել է բացասական լույսի ներքո: Երկու հեռուստատեսություններով՝ չէ և ԱԼՄ, Լեւոն Տեր-Պետրոսյանի լուսաբանման «բացասական» ծավալը գերազանցում է «դրական» եւ «չեզոք» լուսաբանումների ընդհանուր ծավալը:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ կողմից մոնիտորինգի ենթարկվող ռադիոկայանները Սերժ Սարգսյանին ավելի հաճախ լուսաբանել են թեկնածուի կարգավիճակում, քան նրա պաշտոնական դերում: Մոնիտորինգի արդյունքները (հունվարի 11-20) ցույց են տալիս, որ, ընդհանուր առմամբ, Հանրային ռադիոն ավելի հավասարակշռված մոտեցում էր ցուցաբերում առաջադրված թեկնածուների նկատմամբ, քան հեռուստատեսությունները: Ազատություն ռադիոկայանի հեռարձակումներն ավելի մեծ բազմազանություն էին պարունակում թեկնածու առաջադրված քաղաքացիների լուսաբանման գործում, ներառյալ Սերժ Սարգսյանի եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի ներկայացումը դրական, բացասական եւ չեզոք երանգներով:

## IX. ԴԻՄՈՒՄՆԵՐ ԵՒ ԲՈՂՈՔՆԵՐ

<sup>14</sup> Չ1 (հանրային հեռուստատեսություն), ԱԼՄ, Արմենիա, Չ2 (համապետական ծածկույթ ունեցող հեռուստատեսություններ), Կենտրոն, Շանթ, Երկիր Մեդիա (Երևանից դուրս սահմանափակ ծածկույթ ունեցող հեռուստատեսություններ), Հանրային ռադիո, Ազատություն ռադիոկայան, Հայաստանի Հանրապետություն (պետական ֆինանսավորմամբ), Առավոտ, ԱԶԳ, Հայկական ժամանակ (թերթեր):

<sup>15</sup> Չ2-ով Սերժ Սարգսյանին ստացավ լուրերի բոլոր ինը թեկնածուներին հասանելիք ժամանակի 66 տոկոսը: Մյուս հեռուստատեսությունների պատկերը հետևյալն է՝ Կենտրոն (56 տոկոս), Շանթ (53 տոկոս), Արմենիա (48 տոկոս), Չ1 - հանրային հեռուստատեսություն (31 տոկոս) եւ ԱԼՄ (29 տոկոս):

Համաձայն Ընտրական օրենսգրքի՝ ՏՀՀ որոշումները, գործողություններն ու անգործությունը կարող են բողոքարկվել համապատասխան ԸՀՀ-ում: Ընտրական օրենսգրքի վերջին փոփոխություններից հետո ԸՀՀ որոշումները, գործողություններն ու անգործությունը կարող են բողոքարկվել Վարչական դատարաններում<sup>16</sup>: 2008 թվականի հունվարին ստեղծված Հատուկ քննչական ծառայությունը (ՀՔԾ), համաձայն Քրեական օրենսգրքի, պատասխանատու է իշխանության գործադիր, օրենսդիր եւ դատական ճյուղերի կողմից կատարված ընտրական իրավախախտումների քննության համար<sup>17</sup>: Այն անկախ է կառավարությունից եւ վարչապետից եւ վերահսկվում է Գլխավոր Դատախազի կողմից: Անցյալում, ընտրական իրավախախտումների քննությունը տարաբաժանված էր, այժմ այն կենտրոնացված է: ՀՔԾ-ն չի գործում սեփական նախաձեռնությամբ, այն գործում է միայն ստացած բողոքների հիմքերի վրա:

Համաձայն Ընտրական օրենսգրքի՝ ընտրական հանձնաժողովները պետք է մոնիտորինգ իրականացնեն քարոզարշավի ընթացքի վրա: ԿԸՀ-ն մանրամասնել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ի համար, որ իրենց մոնիտորինգը ներառում է քարոզարշավի չորս բաղադրիչների՝ պաստառների, թեկնածուների ծրագրերի, բրոշյուրների եւ հանդիպումների համապատասխանությունը հաստատված ընթացակարգերին: ԿԸՀ-ն նաեւ ընդունում է քաղաքացիների՝ քարոզարշավին վերաբերող բողոքները: Այն դեպքում, երբ ԿԸՀ-ն քարոզարշավի իրականացման դրույթների խախտում է գրանցում, այն կարող է թեկնածուին զգուշացում ուղարկել՝ վերջինիս տալով երեք օր իրավիճակը շտկելու համար: Այդուհանդերձ, ԿԸՀ-ն իրավասու չէ որոշում ընդունել: Եթե, ԿԸՀ զգուշացումը ստանալուց հետո, թեկնածուն չի ձեռնարկում ուղղիչ գործողություններ, ԿԸՀ այնուհետեւ դիմում է Վարչական դատարան:

## X. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Առաքելության ղեկավարին ընդունել են Նախագահ Քոչարյանը, վարչապետ Սերժ Սարգսյանը եւ Արտազին գործերի նախարար Վարդան Օսկանյանը: Կանոնավոր եւ համագործակցային աշխատանքային հանդիպումներ են անցկացվել ԱԳՆ եւ ԿԸՀ-ի հետ: ԵԱՀԿ մասնակից պետությունների դեսպանությունների ներկայացուցիչների հետ առաջին հանդիպումը կայացել է հունվարի 17-ին: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ն ակնկալում է մինչ փետրվարի 1-ն ավարտել առաջին հանդիպումները բոլոր ինը թեկնածուների հետ:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը հայց է ներկայացրել ԵԱՀԿ մասնակից պետություններին 250 կարճաժամկետ դիտորդների տրամադրման համար: ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովը (ԵԱՀԿ ԽՎ), Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովը (ԵԽՄՎ) եւ Եվրախորհրդարանը նույնպես կուղարկեն դիտորդական պատվիրակություններ:

<sup>16</sup> Վարչական դատարանները ստեղծվել են վերջերս՝ ընթացիկ դատական բարեփոխումների գործընթացի ներքո:

<sup>17</sup> Նախկինում դրանք գտնվում էին դատախազության լիազորությունների ներքո:

Հունվարի 25-ին ԵԱՀԿ Նախագահը ԵԱՀԿ ԽՎ փոխնախագահ տիկին Անն-Մարի Լիզանին նշանակել է Հատուկ Համակարգողի պաշտոնում՝ ԵԱՀԿ կարճաժամկետ դիտորդների առաջնորդելու համար: